## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ.

Նոր-Ռուսիոյ համար կարգադրութիւն եղաւ որ այսուհետեւ հասարակաց շէնքերու եւ նորոգութեանց որոշմունքը կարող լինին ընելու իւրաքանչիւր տեղւոյ քաղաքական խորհրդարանները (որ ռուսերէն *տու՛մա* կըսուին) երբ շէնքի մը ծախքը *տասըհազար* արծաթ րուպլիէն վեր չէ:

— Այս կողմերու վաճառականութեանը դիւրութիւն եւ աւելի շարժմունք տալու մտքով, Սեւ ծովու եւ Ազովի նաւահանգիստներուն համար երկու *մաքսական շրջանակներ* որոշուեցան, մէկը Թէոդոսիոյ եւ միւսը Թայղանի. առաջնոյն մաքսապետը պիտի բնակի Թէոդոսիա, միւսինը Կերչ:

— Ըստ խնդրոյ ժողովրդականացն Ռուսաց Տաւրիկեան կուսակալութեան, անցեալ տարւոյն վերջերը որոշուեր է որ նոր եկեղեցական վիճակ մը հաստատուի այս կուսակալութեան համար, որոյ եպիսկոպոսին աթոռը պիտի լինի Սիմֆերոփոլ քաղաքը, եւ բեմակալը պիտի ըսուի *եպիսկոպոս Տաւրիոյ եւ Սիմֆերոփոլի*:

— Ընդհանրապէս ամենայն օտարազգիներու հրաման է այսուհետեւ որ Ռուսիոյ հարաւային կողմերը նաւահանգիստ ունեցող քաղաքներուն մէջ կարող լինին երկրորդ եւ երրորդ կարգի վաճառական գրուիլ, մինչեւ որ օտարականաց վաճառականութեան համար տրուելու իրաւունքները նոր սահմանադրութեամբ որոշուին:

— Ռուսի հպատակաց հետ ամուսնացեալ կանանց համար արդէն եղած օրէնքին այս հարկաւոր բացատրութիւնը տրուեցաւ որ նոքա առանց հպատակութեան երդում ընելու՝ Ռուսիոյ հպատակ կհամարուին. բայց իրենց էրկանը մեռնելէն ետեւ, եթէ կուզեն՝ կարող են իրենց առաջին հպատակութեանը դառնալ:

— Կովկասային երկրին համար մեծամեծ եւ կարեւոր կարգադրութիւններ եղան այս միջոցիս: Կուպան գետին ձախակողմեան եզերքը նոր քաղաք կշինուի. Վրաստանի զինուորական ճանապարհը մեծ գործունէութեամբ շտկուելու վրայ է: Արեւելեան Կովկաս լերանց ներսերը գետնածուխի, ծծումբի եւ ծարուրի հանք գտնուեցաւ. եւ գետնածուխը ընտիր ու այն կողմերը մեծապէս պիտանի է, մանաւանդ Կասպից ծովուն վրայ քալող շոգենաւերուն համար: Կովկասու հիւսիսային կողմի լեռնականաց մէջ առուտուրի սէրը աւելցընելու մտքով՝ Վսեմափայլ Պարեաթինսքի Փոխարքան երկու մեծ տօնավաճառ սահմանեց Կրոզնայա ամրոցին մէջ. մէկը մայիսի 1-ին, եւ միւսը հոկտեմբերի 1-ին՝ ամէն տարի: Կըսուի թէ այս մայիսի սկիզբէն Լիկէոն անունով՝ բարձր ուսմանց վարժարան մի պիտի բացուի ի Տփխիս: — Տարւոյս մէջ Փոթիէն մինչեւ Տփխիս հեռագիր պիտի հաստատուի, եւ Պաքուէն մինչեւ Փոթի շինուելու երկաթուղւոյն համար պէտք եղած քննութիւնները պիտի աւարտին:

— Ստրուկներուն ազատութեան խնդիրը կերեւի թէ այս աշնան բոլորովին պիտի աւարտի ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ բրած մարդասիրական հրամաններուն համեմատ:

— Տէրութիւնը այս միջոցիս մասնաւոր մտադրութիւն կընէ *փլաթին* ըսուած մետաղին վրայ, եւ այն մետաղէն սակ կտրելու հնարքները դիւրացընելու մտքով՝ հմուտ մարդիկ յուղարկեր է Փարիզ:

## ԱՄՍԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՑԻՑ.

Մեծանուն Հայկազն զօրավարը Միքայէլ Տարիէլեան Լոռու-Մելիքեանց (Լօրիս-Մելիքով) ապրիլի 8-ին Թիֆլիզէն Փարի հասեր է, ու երկրորդ օրը ճանապարհ ելեր է ծովով դէպ ի Կոստանդնուպօլիս:

— Գեր. Խորէն Վարդապետ Գալֆայեան ապրիլի 9-ին եկաւ հասաւ Փարիզէն Թէոդոսիա, 11-ին սկսաւ հայկաբանութեան եւ կրօնական գիտութեանց դասատուութիւն ընել Խալիպեան Ուսումնարանին մէջ, միանգամայն եւ ամսագրոյս խմբագրութեանն ու այլ եւ այլ գրոց տպագրութեանը գործակից լինել:

— Խալիպեան Ուսումնարանին աշակերտները առաջին անգամ երեք հատ թատերական տեսարան ձեւացուցին այս տարի Բուն բարեկենդանին օրերը. մէկը գաղղիարէն, միւսը ռուսերէն, եւ երրորդը հայերէն: Հանդիսատեսները, որ այլ եւ այլ ազգերէ ժողվուած հարիւրաւոր անձինք էին, մեծ գոհութիւն ցուցուցին աշակերտաց ճարտարութեանը վրայ, եւ Օտեսայի գաղղիարէն օրագիրը գովեստով յիշատակեց այն դեռակիրթ համբակաց պարկեշտ համարձակութիւնն ու յառաջադէմ քաջութիւնը:

— „ԿՌՈՒՆԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ, ամսագիր Բարոյական, „Բանասիրական, Նկարագրական եւ Վիճակագրական, „նուիրեալ նախնի եւ արդի Հայաստանեայց“:

Կովկասեան աշխարհը բնակող ազգայնոց ուսումնասիրութեանը նոր եւ ուրախարար նշան է այս ամսագրոյն երեւիլը, եւ առաջին երկու տետրակներն ըստ բաւականին կցուցընեն թէ ինչ գովելի հոգւով եւ որպիսի ընթացքով պիտի աշխատին սորա երկասիրողքը օգտակար ընելու ազգիս, եւ մանաւանդ Հայաստանի այն մեծ եւ պատուական մասին, այս գրուածքը:

Կռունկին Ցայտարարութենէն եւ յառաջաբանէն կտեսնեմք որ իրեն նպատակին հասնելու համար որոշեր է բովանդակել իւր զանազան ամսատետրակացը մէջ *Ազգային* եւ *Եւրոպական* հատուածներ:

Առաջին երկու տետրակները յոյս կուտան մեզի որ խոստմունքը կատարէ՝ հետզհետէ աւելի ճոխացընելով իւր բովանդակութիւնը: Վասնզի յունուարի ամսատետրակին մէջ ախորժանօք կարդացինք այս նիւթերը. „Հայոց աշխարհի „իւրաբնակ եւ տարաբնակ որդւոցը, *Մարկոս Աղաբեկեանի*. „— Խորհրդածութիւնք բարոյականութեան վերայ, Գ. *Մու„րատեանցի*. — Սօս եւ Վարդիթեր, Ազգային վիպասա„նութիւն, *Պերճ Պռօշեանցի*. — Երեւանու նահանգի տա„փարակները (տեղագրական), թարգմանուած Պ. Ուսլարի „ռուս բնագրիցը. — Գարունք Հայոց աշխարհին, *Յով„հաննէս Ամերիկեանցի*. — Թէ ինչու է Կռունկ իմ անունս, „Գ. *Մուրատեանցի*. — Էս էլ քեզ շարադրութիւն, Սարգսի „Ցիշատակարանից“: Եւ փետրուարի ամսատետրակին մէջ հետազայքը՝ բաց ի առաջնոյն քանի մի յօդուածներուն շարայարութիւններէն. „Ճաշակ Ազգային եւ հոգեւոր հրա„պարակական դաստիարակութեան, *Մ. Աղաբեկեանի*. — „Հինգերորդ դարու Հայերը, Գ. *Մուրատեանցի*. — Հասա„րակաց Մատենադարան Շուշի քաղաքումը եւ նորա կա„նոնները, *Աղեքսանդր Շահազիզեանցի*. — Հայոց աշխար„հի Կռնկան խապրիկները“:

Խերտ սրտէ կմաղթեմք այս օգտակար եւ շատ գովելի դիտաւորութեամբ սկսուած աշխատասիրութեան ամենայն յաջողութիւն, եւ իկողմանէ բովանդակ ազգիս սիրալիր ընդունելութիւն յօգուտ ընթերցողաց եւ իքաջալերութիւն պատուական հրատարակողաց եւ խմբագրաց նորին: